ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՔՐՕՆԻԿ

ՄԵՐ ԿԵԱՆՔԻՑ

I.

Գրել հայոց կեանքից, դուրս բերել հայոց կեանքից հետաքրքրական, խրատական երեւոյթներ, մտքեր—դրանից աւելի ինչ դժուար բան... Մեզանում կեանք չը կայ—մինչև կոկորդը պատուիրը գոռում է ամեն մէկը, ուր և լինի նա—Թիֆլիս, Բագու, Երեւան, Շուշի։ Գոռում են այդպէս, գոռում են, կրկնում հարիւր անգամ և ամենակատարեալ յուսահատութեամբ ձեռք են թափ տալիս, զզւանքով շրթունքները վեր քաշում։ Եւ յետոյ։ Պարզ հետեւանք.—ամենքը հեռանում են, մանում մի որ և է պատահական կեղևի տակ, կուչ են գալիս, անշարժանում և սուս ու փուս ապրում են, հաց ծամում...

«Կեանք բոլորովին չը կայ, զզւելի է, անտանելի. մարդ անասնանում է»։

Դեռ էլ աւելի խիստ, ազդու բառեր կան այդպէս ասողների բերանում։ Ընդհանուր վհատութիւն, ընդհանուր յուսահատութիւն։ Մրսում ես այդ բացականչութիւններից, այդպէս յուսահատ ձեռք թափ տալուց. այդ մի այնպիսի վարակիչ ցրտութիւն է, ձեռք, ոտք ու հոգի կաշկանդող մի ցրտութիւն, որ եթէ ճարւում էլ են բաղդաւոր լաւատեսներ, փախչում են աչք ու ականջ փակած և նոյն դրութեան են հասնում, որպիսին արդէն վայելում են ամեն ինչ բացասողները, այսինքն՝ էլի ծածկւում են մի որ և է կեղևի տակ, սուս ու փուս կուչ գալիս ու հաց ծամում...

Գանգատների դարում ենք։ Գանգատ և գանգատ ամեն տեղից, ամեն կողմից։ Մէկը գրում է թէ արտասահմանի հայ ուսանողութիւնը իւր

կեանքով պատիւ չի բերում ուսանող անուան. մի ուրիշը գրում է թէ ռուսաց համալսարանների հայ ուսանողները միայն գոռալ, անմիտ ֆրազներ արտասանել գիտեն, բայց իրօք անպէտք մարդիկ են, դատարկ արարածներ և այլն և այլն. մի ուրիշը յայտնում է թէ Բագուի երիտասարդութիւնը հիասթափւած է, սառած, մեռած է. ոչինչ գործ չի կարողանում կատարել։ Հայ գրագէտը, ասում են, իւր գրչի անմիտ խաղերով է զբաղւած և կարծում է թէ մի ահագին, անգնահատելի գործ է կատարում։ Մեր ազգային հռչակաւոր թզուկ մեծամիտները օրէցօր ուռչում են, փքւում և արդէն այն աստիճանին են հասել, որ չատ նեղանում են, երբ մէկը չի ուզում հաւատալ թէ իրանք, այդ թզուկներն են միայն, որ կարող են առարկան այնպէս տեսնել, ինչպէս որ կայ, կարող են խելք սովորացնել, ուղղութիւն տալ, ապրեցնել բոլոր այն հասարակ մահկանացուներին, որոնք ամեն օր տեսնում են նրանց և չեն հասկանում թէ ինչու են նրանք փքւում, ուռչում։ Աւելացրէք այդ բոլորի վերայ մեր ազգային աղաների, հոգաբարձուների, երեցփոխների մասին դիզւած գանգատները... Ո՞վ կարող է այդ բոլոր գանգատների չափը, սահմանը որոշել...

Եւ այսպիսի մի դրութիւնից ինչ վերցնես, ինչ գրես, մանաւանդ երբ հարիւրաւոր, հազարաւոր բերաններ հաւատացնում են, որ այդ դրութիւնը բոլորի համար զզւելի է, որ այդ կեանք չէ, այլ սատանան գիտէ թէ ինչ բան է...

Զարմանալի է։ Աշխարհիս մէջ կեանք ասած բանից էլ ինչ որոշ հասկացողութիւն։ Բայց մենք չենք հասկանում և միայն կրծքներս ենք ծեծում... Մենք ապրում ենք, մենք մեռած չենք, ամեն օր արև ու երկինք ենք տեսնում, բայց յամառութեամբ կրկնում ենք թէ կեանք չը կայ։ Այդ չի նշանակում արդեօք, որ մենք մեր չուրջը եռացող հազար ու մի բարի կամ չար կողմ և կերպարանք ունեցող աշխարհում կեանք չենք տեսնում։ Կեանք, ի հարկէ, կայ. կան և կեանքի համար անհրաժեշտ պայմանները,—մարդ, լոյս, խաւար, աշխարհ, ուտել, խմել։ Իսկ եթէ այդ մեծ բանի գոյութիւնը հրապարակով ուրանում ենք, դրանով մեր սարսափելի անկարողութիւնն ենք ցոյց տալիս։ Իսկ թէ լաւ է թէ վատ այդ կեանքը—այդ ուրիշ հարց է, որից, սակայն, յուսահատւելու առիթ չը կայ։

Ամեն տեղ կարելի է տեսնել դրսի, հասարակական կեանք և ներքին, ընտանեկան կեանք։ Այդ երկու կեանքերը լինում են տխուր, ուրախ, զւարճալի և մեռած, ճահճային։ Եթէ եւրոպացին իւր կեանքի մասին խօսելիս նկարագրում է, օրինակ, այն հեշտութիւնը, որ ժամանակակից գիտութիւնը տւել է բնութեան կոշտ կրծքից հաց պոկող մարդուն, իսկ հայը միայն իւր հոգաբարձուի օձիքիցն է բռնել, կամ ուրախանում է, հրճւում, երբ մի որ և է տիրացու խելքին զօր անելով երկու ու կէս լաւ խօսք է ասում, այդ չի նշանակում թէ եւրոպացին ապրում է, իսկ մենք գոյութիւն չ'ունինք, այս աշխարհից չենք։ Նա այնպէս է, մենք այսպէս։ Նո-

քու պատմածը կը լինի այնպիսի բան, որի վերայ կը զարմանանք, իսկ մեր պատմածը այնպիսի բան, որի վերայ ծանր կերպով գլուխներս կը թափահարենք։ Ո՞վ կարող է ասել թէ միայն զարմանալն է լաւ, իսկ գլուխ թափահարելը բոլորովին անօգուտ է։

Հետեւաբար, փախչել միայն այն պատճառով, որ մեր մէջ հիացնող բան չը կայ, յուսահատել, պատճառ բերելով թէ մեր կեանքը կատարեալ ճահճային է, երբէք չի վկայում թէ այդպէս անողները մի լաւ մտքի վերայ են։ Ճահիճը մեզ վախեցնում է և մենք փախչում ենք, ուզում ենք ազատել նրանից գլուխը ինչպէս.—աւելի խոր թաղւելով նորա մէջ, այնպիսի դիրք բռնելով, որ կեղտոտ տիղմը մեզ ծածկէ ամեն կողմից։

Ո՛չ. կ'ուզէք ճահիճ անուանեցէք, կ'ուզէք ուրիշ անուն տուէք, բայց մեր կեանքն էլ կեանք է։ Նայենք նրան, տեսնենք. գուցէ ամեն անգամ մեր առջևը կեղտ չը դուրս գայ, գուցէ հանդիպենք այնպիսի տեղերի, որոնք մեր յուսահատ, յոռետես փիլիսոփաների համար մի խրախոյս, վերջապէս լոյսի մի կտոր բերեն։

Այս միտքը ինձ հարկադրում է գրել մեր կեանքից, որչափ ույժս ու կարողութիւնս կը ներեն։ Ամփոփ, վերջացրած բան չէ իմ խոստացածը։ Նիւթի պակասութիւնը ակներև է. մենք չենք սիրում միմեանց բան հաղորդել, ապրել բաց և արձակ. մենք սիրում ենք ծածկւել, հեռանալ, առանձնանալ։ Բայց և այնպէս, պատահական նիւթեր միշտ կը լինին, որոնք յամենայն դէպս ուշադրութեան արժանի են։ Ես կը խօսեմ դրանց մասին իբրև մի հասարակ մտածող։

Իմ այս նախաբանը բոլորովին աւելորդ բան կը լինէր, եթէ մեր մէջ գոնէ քիչ լինէր այնպիսի մարդկանց թիւը, որոնք այնքան խստապահանջ են դէպի ուրիշները և թոյլ, ներողամիտ իրանց պակասութեան վերաբերմամբ, որոնք ամեն բանի նայում են խոշորացոյցի միջով և իրանց շատ բաղդաւոր են համարում, որ այդպէս են և ոչ ուրիշ կերպ։

II.

Սկսենք մեր ընտանիքից։

Ի՞նչ է ընտանիքը մեզ համար։—Թող այդ հարցին պատասխանէ մեր ժամանակակից ամենաերևելի հոգեբանը, մեր Խրիմեան Հայրիկը։ Քիչ են այնպիսի ընտրեալները, որոնք կարողանան նկարագրել Հայրիկի պէս։ Ես բերում եմ նորա «Դրախտի ընտանիք» անունով պատւական, բայց դժբաղդաբար մոռացւած գրքից այս կտորը.

«Ժողովուրդը եթէ կը յառաջադիմէ՝ իւր առաջին քայլը ընտանեաց սրահէն կ'առնու. եթէ կը լուսաւորի, իւր լոյսը ընտանեկան ճրագէն է. եթէ կը զօրանայ, իւր ուժ և բազուկն ընտանիքն է. եթէ կը հարստանայ, իւր գանձարան և գանձապետն ընտանիքն է... եթէ դրախտի գե-

տերը կը վազեն իւր հրապարակը. աղբիւրը դրախտի ընտանիքն է... եթէ բարեծնունդ զաւակներով օր ըստ օրէ բիւրապատիկ կաճի. իւր նախածնող խնամատար ընտանիքն է. եթէ իւր զաւակները բարեկիրթ քաղաքացի պատրաստել կ'ուզէ, իւր բարեկրթութեան առաջին համալսարան ընտանիքն է. եթէ այս աշխարհիս վերայ երջանիկ ապրել կ'ուզէ, թող հաւատայ, որ երջանկութեան կեանք բաշխող աղբիւր ընտանիքն է. եթէ երկրէս յետոյ երկինքն ևս ժառանգել կ'ուզէ՝ պահելով իւր հայրենի կրօն, հաւատ և եկեղեցին, այո, այդ սուրբ աւանդները անեղծ անկորուստ պահելու խորանն ընտանիքն է»

Աւելացնելու ոչինչ բան չը կայ։

Կար մի ժամանակ—և այդ ժամանակը մեզանից չատ չէ հեռու—երբ մեր ընտանիքը կառավարւում էր որոշ աւանդական կարգերով, սովորութիւններով։ Դրսի, հասարակական կեանքն էլ ունէր այնպիսի կարգ ու կանոններ, որոնք կապ ունէին ընտանեկան օրէնքների հետ։ Լաւ թէ վատ, մէկը միւսի չարունակութիւնն էր, մէկը միւսի օժանդակն էր, և այդ երկու աշխարհները համերաշխ էին միմեանց հետ։ Մէկի տեսակէտից նայելով, միւսը անհասկանալի չէր երևում, չէր ցոյց տալիս իւր պակասութիւնը, սխալը։ Ամեն ինչ գնում էր կարգին. ցաւը ցաւ էր, ուրախութիւնը ուրախութիւն։ Ամեն մի մարդ բռնած ունէր իւր տեղը, ամեն մէկը հասկանում էր թէ ինչ է ինքը։ Այսպէս, ընտանիքի մեծը, մայրը, տանը անփոխարինելի մի իշխանութիւն էր, ինչպէս հայրը դրսումն էր այդպէս. մեծ հարսը իւր տեղն ու նշանակութիւնն ունէր, փոքրը իւր տեղը. աղջիկը գիտէր թէ որին ինչպէս պէտք է հնազանդի։ Եթէ մի որ և իցէ պատճառով խանգարւում էր ընտանիքի այդ կարգն ու կանոնը, եթէ մէկը մոռանում էր իւր պատշաճաւոր տեղը, պարտականութիւնը, իսկոյն դրսի աշխարհը սկսում էր ճնշել անկարգութիւնը, դատապարտել, մինչև որ խանգարւած դրութիւնը այս ու այն կերպ իւր օրինական ընթացքն էր ստանում։ Կար, մի խօսքով, դեկ, որին նայում էին, որի ետևից չարժւում էին։

Բայց ժամանակը փոխեց դրսի հանգամանքները. վերցուեց հինը և նորա տեղ մուտ գործեց նորը։ Մնաց ընտանիքը նոյն դրութեան մէջ. նա պիտի պահէր իւր աւանդական սովորութիւններով, բայց այլ ևս հաստատ ղեկակէտ չ'ունէր, այլ ևս ոյժի ու կարողութեան տէր չէր, որ դիմանար։ Դրսինը վերանալուց յետոյ ներքինը մի անտաշ, կոպիտ բան էր երևում. դրսինը այլ ևս չէր օժանդակում նրան, չէր պահպանում, այլ քայքայում էր նորա ամբողջ կազմուածքը։ Ընտանիքը նոր կարգերից, փոխւած հանգամանքներից չը ստացաւ ուրիշ կերպ կառավարելու կանոններ. դրսինը վայր ի վերոյ էր, ինքն էլ չ'ունէր հաստատ, տեղական կերպարանք։ Եւ ընտանիքը մնաց բաց, արձակ ամեն կողմից. նա սկսեց, եթէ կարելի է այսպէս ասել, հողմահարւիլ ամեն կողմից. նրան ոչ ոք չէր պահպանում, այլ ընդհակա-

ւակն, ամեն մէկը իւր շունչն էր հաղորդում նրան, իւր գոյնն էր տալիս նրան։ Եկաւ կնոջ էմանսիպացիան, թեթեւ կերպով մեր ականջին քսւեց, և հայ կինը դէն ձգեց իւր կեղեւը, քայլեց դէպի դաշնամուր, ձեռք առաւ հովհարը, երես բացաւ, տղամարդկանց ծանօթութիւններ որոնեց, սկսեց անվախ խօսել հրապարակներում, դարձաւ սալոնի զարդ, բայց ոչ երբէք այն, ինչ որ պահանջում էր էմանսիպացիայի ոգին—Եկաւ ճաշակի խընդիրը, հայ ընտանիքը շտապեց դէն ձգել իւր Արզումաններին, Մկրտիչներին, Մելքումներին, Նախշուններին, Մանիշակներին և սկսեց աջ ու ձախ մկրտել աւելի քնքուշ անուններով։ Եկաւ ոճի նրբութեան, մարդամէջ դուրս գալու խնդիրը։ Եկաւ մտքի, գաղափարի ազատութեան խնդիրը. հայ տիկինը փողոցներ չափելը սովորեց, հիւր գնալ, հիւրեր ընդունել սկսեց, կանաչ սեղանների շուրջը նստեց մարդավայել թղթախաղի համար։ Նա մի րոպէում հասկացաւ, որ ինքը պարտաւոր է իւր սրտին խիստ ազդու տպաւորութիւններ պատճառել, ուստի սովորեց «խունջիկ-մունջիկ» անել, դուր գալ, գրաւել։

Այսպէս ահա կատարելութիւնը հասաւ ամեն կողմից, մտաւ ընտանիքի մէջ։ Բայց հայ կինը մնաց նոյնը, ինչպէս էր ճորտութեան, ստրկութեան ժամանակներում, երբ կար տէր և հրամանատար, երբ կար բռնաւոր, կար արգելք մտքի, կամքի ազատութեան դէմ։ Մնաց նոյն անզարգացած, անհասկացող, նախապաշարուած արարածը։ Լուսաւորութեան, քաղաքակրթութեան արտաքին յատկութիւնները, ձեւերը թափւեցան նորա վերայ, ներքինը մնաց դարձեալ դատարկ, դարձեալ անմշակ, խոպան։ Եւ նա ծանրացաւ ընտանիքի վերայ. նա դարձաւ մի անհաշիւ սպառող արարած, որ ստեղծեց իւր համար անթիւ ծէսեր, արարողութիւններ։ Մի այսպիսի վերածնութիւնը—եթէ կարելի է վերածնութիւն անուանել—այնպէս արագ կերպով կատարւեց և կատարւում է դեռ, որ անհնարին է նոյն իսկ գիտել, իմանալ թէ ինչ տեսակ հոսանքն է ամենից զօրաւորը, որ տանում է իւր հետ հայ ընտանիքի անդամներին։ Փոփոխութիւնները արագ յաջորդում են միմեանց, այսօրւայ տեսածդ վաղը ուրիշ կերպարանքի տակ է լինում։ Կանոնաւոր ընթացք, հետեւողութիւն չը կայ։

Այդ ամենը, ի հարկէ, տղամարդի միջոցով կատարւեց։ Տղամարդն էր, որ դրսից բերում էր նոր կարգը, այն ամենը, ինչ ինքն էր սովորում։ Իսկ նրան սովորացնողները շատ էին։ Վարելով թափառական կեանք, երկար տարիներ շփւելով զանազան ազգութիւնների, զանազան երկիրների կեանքի հետ, նա իրան յատուկ սրամտութեամբ որոնում, գտնում էր, իւրացնում իւր սեպհական կեանքի համար բոլորովին խորթ, անբնական, բայց իւր կարծիքով լաւ բաներ և այդ բոլորը բերում էր, տուն մտցնում։ Նա ինքն էլ չ'ունէր պատրաստութիւն, նա ինքն էլ միայն արտաքին փայլով ոգեւորւող, հիացող մի միամիտ էր, ուստի կարծում էր թէ իւր դերը միայն նորութիւն ներս բերելն ու ցոյց տալն է։ Նոյն իսկ այժմ էլ, մեր

աչքի առաջ, գործում են միամիտ ներմուծողները։ Դիցուք մեկը, մի անգրագետ հայ մարդ, բաղդի բերմունքով մի որ և է ցեղ ընկած, մոռացած անկիւնում կարողացել է շատ թէ քիչ կարողութիւն ձեռք բերել։ Նա փոխւել է. նա չի կարող ոչ միայն առաջւայ հագուստը հագնել, այլ և առաջւայ պէս խօսել։ Նա փոխում է հագուստը, փոխում է և լեզուն։ Սակայն լեզու փոխելը հագուստ փոխելու պէս հեշտ չէ։ Հագուստը հարքաւացնելու համար նորա կողմից հարկաւոր է միայն կամք. իսկ լեզուի հարստութեան համար նա դիմում է մի կատարեալ մտաւոր ինքնասպանութեան։ Նա հաւաքում է բազարների, փողոցների անկիւններում լսած հատ ու կտոր մտքեր, ոճեր, ըստ մեծի մասին պառնց հասկանալու նրանց իմաստը, գրաւած միայն նրանով, որ այդ մտքերը, ոճերը գործ են ածել իրանից բարձր մարդիկ. և աջ ու ձախ դործ է ածում իւր լսածը, ականջի մի անկիւնով ըմբռնածը։ Մարդը, տեսնում ես, խօսում է, երկար խօսում է իրրև համոզած, նորութիւն բերած մարդ. նա գործ է ածում թէ մաքուր հայերէնի ճռճռան ֆրազները, թէ մաչած օտար խօսքերը, և նկատում ես, որ ճգնում է հաստատել մի վերացական մտք, աչխատում է մի ինչ որ իդէա քարոզել։ Եւ ի՞նչ։—Լսում ես, լսում և ոչինչ չես հասկանում։ Բառերով, ոճերով բեռնաւորուած մի ցաւագար, մի հիւանդոտ միտք, որի ինչ լինելը դարձեալ մութ է մնում, դարձեալ անհասկանալի. չը գիտես ո՞ւր է սկիզբը և ո՞րն է վերջը. չը դիտես թէ ի՞նչ նպատակի է ծառայում այդ անմիտ բառախաղութիւնը, որը, սակայն, նոր, վերանորոգուած մարդու համար մի խորիմաստ ֆիլօսոֆայութիւն է, մի այնպիսի հաղւագիւտ ֆիլօսոֆայութիւն, որին ամենքը պարտաւոր են ականջ դնել, լաւ ականջ դնել և անպատճառ հասկանալ։

Արդ, ով պէտք է ականջ դնէ նրան, հասկանայ, իւրացնէ նորա, այսպէս ասած, անդամալոյծ գաղափարը։ Դրսում նա այնքան պահանջող չի կարող լինել, որովհետև դրսում նա գոնէ քաչւում է, գոնէ մեկի, երկուսի մօտ պարտաւորուած պիտի լինի խոստովանել, որ ինքն այնքան գիտուն չէ։ Մնում է տունը, ընտանիքը. այդտեղ նա կարող է պահանջել, այդտեղ չը կայ մեկը, որ կարողանայ իրան նրանից բարձր համարել. այդտեղ նրան մի փոքր աստուած են համարում։ Եւ ընտանիքը իւրացնում է նրանից նորա սիրած գաղափարը, այսինքն անմիտ և անիմաստ հողմային ճրթճրթոց։ Այս երևոյթը անհատական չէ, թող ամենևին չը վրդովւեն մեր այն պարոնները, որոնք վարդագոյն ակնոցները աչքերին դրած՝ դէս ու դէն են նայում և ամեն ինչ չափում, կշռում են իրանց ձեռքում բռնած արշինով։ Հասարակ և միջին դասակարգը այժմ եռանդով մի այնպիսի վերանորոգութիւնն է իւրացնում։ Եւ այլապէս չի կարող լինել։ Հայկական հնաւանդ իմաստութեան մի քարոզն էլ այն է, թէ փողը պարտնակում է իւր մէջ ամեն ինչ, թէ հարստութիւն, գեղեցիկ կեանք, թէ խելք, իմաստութիւն։ Առանց խելքի, և մեծ խելքի, անհնարին է փող աչխատելը.

եթէ այդ այդպէս չը լինէր, ամեն մէկը կը լինէր հարուստ։ Այդ միտքը այնպէս ամրացած է, այնպէս հաստատ հիմք բռնած, առարկութիւն չ'ընդունող մի միտք է, որ ամեն դասակարգի մարդիկ գլուխ են իջեցնում այդ ուժի առաջ, միայն դրամական ուժի առաջ։ Նոյն իսկ ուսում առած մարդը, նոյն իսկ այնպիսին, որ խմբագրի պաշտօնին է հասած, չի կարողանում ծածկել իր թուլութիւնը, չի կարողանում չը խոնարհել մէջքը դրպան ունեցողի առաջ։ Շատ միամիտ կը լինինք, եթէ ենթադրենք թէ փողատէրերը այնքան համեստ են, որ մերժում են ամբոխի իրանց մասին կազմած միտքը։ Ո՛չ. Նրանք ամենքից ազդու կերպով են տարածում այդ միտքը, նրանք ամեն մէկից լաւ են հասկացած, որ, ճշմարիտ, խելքը, իմաստութիւնը իրանց մօտ է։ Հիմա երեւակայեցէք գիւղից կամ քաղաքի ստորին խաւերից դուրս եկած մարդիկ, որոնք կարողանում են կանգնել հրապարակում և ասել թէ իրանք աղքատ չեն, փառք Աստուծու, շատ լաւ են։ Նրանք ամեն տեղ տեսնում են յարգանք, ակնածութիւն դէպի իրանց անձնաւորութիւնները, ստանում են խոնարհ ողջոյններ, շողոքորթ գովասանութիւններ։ Հասարակական գործերում, կեանքի վերաբերեալ մի որ և է հարցում ուշադրութեամբ նրանց են լսում, նրանց են ականջ դնում և նրանցից են սպասում խելօք, վճռական մի խորհուրդ։ Այդպիսի բաղդաւորները ինչպէս չ'ունենան իրանց առանձին, սեպհական գաղափարները, ինչպէս անտարբեր մնան և չը ցոյց տան, թէ իրանք, ճշմարիտ որ, շատ խելօք են, հասկացող։ Մարդը խեղդւում է այդ բաղդից, սպանում է իր առաջւայ միտքը, ճմլում է իր նախկին հասկացողութիւնները, և իր անցկացրածից դուրս բերելով մտքերի, ֆրազների, խօսքերի կտորներ, կազմում է իր սեպհական փիլոսոփայութիւնը, որը թէև անտանելի է, բայց հրապարակում չի ծաղրւում, չի մերժւում լսողների շրջանից, քանի որ ասողը, քարոզողը ունի ուժ, ունի փող։ Այդպիսի խելքեր առաջներում շատ էր տալիս մեր գաւառներին Բաքուն, իսկ այժմ տալիս է Անդրկասպեան երկիրը, այն աւետեաց երկիրը, ուր զարմանալի, անհասկանալի հրաշքով երեկւայ խեղճ կօշկակարը դառնում է փողի և փողի հետ կապւած խելքի տէր։

Սրանք են մեր կեանքի վերանորոգիչները, սրանք են ընտանիք կազմում և ընտանիքին գաղափար, իդէալ տալիս...

Ինչ տեսակ քարոզութիւններ անեն դրանք, ինչ տեսակ մտքի և խելքի տէր լինին, իրանց անձի, իրանց եսի համար մի և նոյնն են, ինչպէս էին առաջներում, անյայտութեան, անփողութեան և անխելքութեան ժամանակ։ Ընտանիքը նրանց ստրուկը պիտի լինի, նա պիտի իր բարօրութիւնը զոհ բերէ նրանց հաճոյքին, անձնական հանգստութեանը և կրքերի խաղաղ և անարգել զարգացմանը։ Զոհը այժմ միայն մի տեսակի չէ, երկու տեսակի էլ չէ. որովհետև հաճոյքը, անձնական հանգստութիւնը այժմ բազմաթիւ և բազմատեսակ հասկացողութիւններ են պարունակում

իրանց մէջ։ Կեանքը փոխւել է. եթէ առաջւայ հարուստ վաճառականը բաւականանում էր մի տեսակ կերակուրով, մի չափաւոր կեանքով, այժմեան վերանորոգիչը, որ աչխարհ է տեսել, մարդ է ճանաչում, ունի մի շատ ճաշակ։ Բոլոր միւս գործերում էլ նա այդպէս է, իւր անձնական ապահովութեան, բարեկեցութեան համար ունի բազմապիսի պահանջներ։ Եւ այդ պահանջները պիտի կատարւեն. ամենից հնազանդ կատարողը, ի հարկէ, ընտանիքն է։

Անցեալներում իմ ծանօթներից մէկը սաստիկ վրդովւած էր, խօսք չէր գտնում իւր արդար զայրոյթը արտայայտելու համար։ Նրան այդպէս լուզել էր մի դէպք, որ որքան ցաւալի է, այնքան էլ բնաորոշ յատկութիւն ունի մեր ներկայ հանգամանքների վերաբերմամբ։

—Երևակայիր, ասում էր ծանօթս, կարծելով թէ ես բաւականաչափ չեմ ըմբռնում նորա արած պատմութիւնը.—երևակայի՛ր քեզ, այս ինչ հրէշային այլանդակութիւն է։

Այդ օրը թաղել էին մի ջահիլ կնոջ։ Այդ կիներ նոր էր այրի մնացել, մի չորս ամիս դրանից առաջ թաղել էր իր ամուսնուն։ Նա բաւական դեղեցիկ էր, ժիր, տնարար. «Եւ խելո՛ք, աւելացնում էր ծանօթս,—չը գիտես թէ ինչպէս խելոքն էր»։ Նա ունէր մի երեխայ, բայց և այնպէս մէկը, վերև նկարագրած վերանորոգիչներից մէկը. համաձայնել էր նորա հետ պսակւել։ Այդպիսի մի վարմունք պատիւ է բերում այդ մարդուն. մեր ժամանակներն ով է այրի կնոջ հետ կապւում ամուսնական կապերով, եթէ այդ կապերի համար չը կայ բաւականաչափ դումար։ Մարդը հաւանել է չքաւոր այրիին, հաւանել է. նորա վարքի և արտաքինի դեղեցկութիւնները և այդ պատճառով համաձայնել է վերցնել ուրիշի երեխային և պահել։ Դուցէ այդ վերանորոգիչը իւր զարմանալի այլաբանական լեզուով մի այդպիսի գաղափար քարոզել էլ է։ Բայց կնոջ մայրը իմանում է, որ իւր աղջիկը չղի է։ Գիտէք, որ մի չղի կնոջ հետ պսակւելը մի հրապուրիչ բան չէ. մանաւանդ որ փեսան երիտասարդ է, նոր պէտք է ճաշակէ ընտանեկան կեանքի քաղցրութիւնը. մայրը մանաւանդ լսում է, որ փեսան մի կերպ դժւարութեամբ էր համաձայնում ուրիշի երեխային պահել, համաձայնում է աւելի այն պատճառով, որ այդ երեխան է միայն, որին ակամայ պիտի պահէ, ուրիշը չը կայ։ Մայրը չի ուզում այնպիսի փեսայից զրկւել և, առանց երկար մտածելու, մի ինչ որ պառաւից ձեռք է բերում մի թանձր դեղ, խմացնում է իւր անբաղդ աղջկան, որպէս զի սա աղատւի արդեալառիթ կապանքից, որպէս զի փչացնէ նորա արդանդի երեխան։ Խելոք և գեղեցիկ աղջիկը չի կարողանում դիմադրել մօր կամքին, որովհետև որքան էլ խելոք լինի, չի կարող չ՚իմանալ, որ ուրիշ կերպ անկարելի է, խմում է այդ դեղը և երեխան կտոր կտոր դուրս վիժելուց յետոյ ինքն էլ մեռնում է։

Այս դէպքից էր ծանօթս այնքան վրդովւել։ Ճշմարիտ, դա մի չատ

տխուր երեւոյթ է։ Մի կողմից ներկայանում է մեր առաջ մի մայր, որ մոռացել է աւանդական առաքինութիւնը. քի՞չ են եղել այնպիսի մայրեր, որոնք նստել են իրանց տանը, սեւացրել են իրանց ջահիլութիւնը, պահել, մեծացրել են իրանց որբերին։ Բայց այժմ որդեծնութիւնը շատ դէպքերում դժբաղդութիւն է համարւում, ազատ քայլն արգելող մի հանգամանք, որը վերացնելու համար պառաւների դեղերին են դիմում։ Զորս ամուսնու այլի կնոջ համար ամօթ է երեխայ ծնելը։ Ամօթ բառը, ի հարկէ, մենք չենք գործ ածում. ամօթ բառը միակ փաստն է, որով արդարանում են աղջկայ մայրը և փեսան։—Միւս կողմից մենք տեսնում ենք մի խեղճ ճակ, որ զոհ է բերւում տղամարդի հեշտասիրութեանը, անձնական բարեկեցութեանը։ Տղամարդի ցանկութեան, այս կամ այն կերպ տրամադրութեան առաջ ոչնչանում է մայրական սէրը, ոչնչանում է մի կղի մօր անձնական կամքը, փափագը, ցանկութիւնը. այդ բաւական չէ, փչանում է և ինքը, խեղճ մայրը և թողնելով օրօրոցում լալիս մի անմեղ երեխայ, պառկում է սառն հողի մէջ։ Այդ մայրը մի անլեզու, անկարող կամակատար էր. Նրանից պահանջում էին, Նրան դուրս էին դցում հասարակութեան շրջանից, Նրան չէին թոյլ տալիս մի բաղդաւոր ընտանիք կազմելու, որովհետև Նա կրում էր իւր կրծքի տակ մի փոքրիկ արարած։ Եւ ճնշուած այդ պահանջների, այդ տեսակ պայմանների ծանրութեան տակ, Նա ազատւելու փոխարէն կոտրւած, փչացած ընկնում է. Նորա ձեռքին չը կար պահւելու, ազատ շնչելու մի ամենաթոյլ միջոց անգամ։ Ի՞նչ անուն տաս... Մշեցի օրիորդը Մուսա-բէկի բռնութեան դէմ բողոքելու համար Պօլիս է գնում, եւրոպական մամուլի ուշադրութեանն է արժանանում։ Իսկ այս զոհը։ Թէև սա աւելի սարսափելի կերպով է բռնաբարւած իւր տան մէջ, իւր ընտանիքում, բայց ոչ ոք իրան մեղաւոր չի համարում այդ գործի մէջ։ Ո՛չ ոք... որովհետև այդպէս էր կարգը, այդպէս էր տրամադրում այն հասկացողութիւնը, որին հետևում էին զոհի պատճառները։

Ի հարկէ, բոլոր զոհերը մի և նոյն կերպ չեն պատկերանում, մի և նոյն լեզուով չեն խօսում. իմ պատմած դէպքը անհատական երևոյթ է. բայց խնդիրը այդ երևոյթին չի վերաբերում, խնդիրը նրանումն է, որ հայ ընտանիքը զոհեր և անմեղ զոհեր շատ է տալիս։ Եթէ տեսնենք դրանց, քըննենք, ամեն կողմից քննենք, կ'իմանանք, որ այդ զոհաբերութիւնը կատարւում է առանց մի որոշ օրէնքի ազդեցութեան, այլ, այսպէս ասած, պատահաբար, զանազան կողմերից եկած հոսանքների զօրութեամբ, հոսանքների, որոնք այսօր մի կերպ են գործել տալիս, վաղը բոլորովին ուրիշ կերպ։ Եւ այդ բոլորը ցոյց է տալիս, որ հայ ընտանիքի այժմեան ցաւը նրանումն է, որ նա չ'ունի ընտանեկան մի որոշ, անխախտ դիրք, որ նա զրկւել է հաստատ յենակէտից. նա չ'ունի մի հաստատ իդէալ, որին կարողանար հետևել. Նրան չեն տալիս բարոյական կրթութիւն, նա զուրկ է մտաւոր գործունէութիւնից, լայն և պարզ գաղափարից։

Լ. Ե. Թ